

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Ջավադյան

« 29 » մարտ 2010թ.

ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

1. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ «Սակագների մասին» կանոնների տեքստում «Հայաստանի Ֆոնդային Բորսա» բառերը փոխարինել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» բառերով:
2. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ «Սակագների մասին» կանոնների 11-րդ գլխի 1) կետը լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.
«Բորսայի վարկային ռեսուրսների շուկայում առևտրին մասնակցելու իրավունք ստացած Բորսայի անդամները վճարում են նաև վարկային շուկայի համար սույն կանոնների 12-րդ գլխով սահմանված վճարը:»:
3. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ «Սակագների մասին» կանոնների 12-րդ գլխի 1) կետը «Բորսայի յուրաքանչյուր» բառերից հետո լրացնել «շուկայում և/կամ» բառերով:
4. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ «Սակագների մասին» կանոնների 13-րդ գլուխը լրացնել նոր 11) կետով՝ հետևյալ բովանդակությամբ.
«11) Վարկային ռեսուրսներով Բորսայում կնքված գործարքի յուրաքանչյուր կողմից գանձվում է միջնորդավճար՝ տվյալ գործարքի անվանական ծավալի 0.0001% չափով:»:
5. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ «Սակագների մասին» կանոնների 16-րդ գլխի 4) կետը «դիտորդի կարգավիճակով հետևելու» բառերից հետո լրացնել «և Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ սահմանված տեղեկությունները (որը չի կարող ներառել բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություններ) դիտելու» բառերով:
6. «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ «Սակագների մասին» կանոնների 18-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Գլուխ 18. Այլ դրույթներ

1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:»:

7. Սույն փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով գրանցման պահից:

Հաստատված է
«ՆԱՍԴԱԶ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Արմեն Մելիքյան**

«16» նոյեմբերի 2009թ.
ք. Երևան
ՀՖԲ-01/121Լ